

ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՂԵՒԻՐՆԵՐԸ .

Պէտք է խոստովանել, որ մեզանից շատ քչերը ուշադրութիւն են դարձնում իւրեանց սեփական առողջութեան վերայ: Մի անգամ մի փիլիսոփայի ասացին, թէ նորա ասուը այլու մէջ. նա պատասխանեց «այդ իմ գործս չէ, կնոջս ասացէք»: Նորա կարծիքով ասուը կնոջ մասնաւոր սեփականութիւն է: Մի և նոյն կերպով մեր հասարակութիւնը իւր առողջութիւնը բժշկներէ մասնաւոր սեփականութիւն է համարում, թողնում է որ նորա գան հարցնեն իւր հիւանդութեան համար, իսկ ինքն պարագու մէ իւր գործերով. նա նորան է թողնում իմանալ իւր հիւանդութիւնները և բժշկել նոցա, իսկ ինքը ձեռքը խաշած նայում, բժշկի ձայնին կարեւորութիւն տալով միայն այն ժամանակ, երբ պէտք ունի նա միայն կարօտութեան միջոցին է դիմում նորան, ասանց աշխատելու որ կեանքը աւելի լայնացնէ, որ իւր տիֆերը, տենդերը, թոքաախտները, կորժրուկները բոլորովին վերջացնեն, որ որչափ կարելի է աւելի քիչ հիւանդանան: Բժշկից խորհուրդ հարցնել ինչպէս պէտք է իւր ասուը շինէ, զաստիարակէ իւր մանուկը, ճանապարհին ինչպէս պիտի պահէ իւրեան, ինչպէս կողմէ իւր ընտանեկան կեանքը — այսպիսի բարեկամական խոսակցութիւններ անել բժշկի հետ — նա իւրեան անպատուութիւն է համարում:

Այսպիսով հասարակութեան կարծիքով բժիշկը պիտի իմանայ հիւանդութիւնները և բժշկէ նոցա. նա բժշկից ուրիշ բան չէ պահանջում, նորա կարծիքով մնացածները նորա խելքի բանը չեն: Սա դեռ բաւական չէ գուրս է զայիս մի սկիպտիկ և հաւատցնումէ հասարակութեան, թէ հիւանդութիւններէ մեծ մասը ասանց զիղերի և ասանց բժշկի մասնակցութեան կարող են անցնել:

Կես մինչև այժմ, մեզանից շատերը վշտով են յիշում այն երջանիկ օրերը, երբ բժիշկ կանչելը «արիւն տունել» էր նշանակում, երբ իւր բժիշկները արիւնարբու գաղանների նման նշտաները կամ ազրուկներով լի ամանները ձեռքերին բռնած այս կողմը այն կողմը շրջելով արիւն էին առնում, երբ հարիւրաւոր և հազարաւոր մարդիկ զոհ էին գնում բժիշկների այս վարմունքին: Այժմ անցել է այն ժամանակը, շատ քիչ բժիշկ կարելի է գտնել որ զինաւորուած լինի նշտարով, նա այժմ մօզա չէ, այժմ բժիշկները աշխատում են, զլուխ են ճաքեցնում, այս աշխարհից այն աշխարհքն ընկնում զիղեր փնտռելու համար, այս ինչ կամ այն ինչ հիւանդութեան միջոց գտնելու համար. բժշկականութիւնը մեծ մեծ քայլերով առաջ է գնում, զանազան զիտեր է անում, զանազան բժշկական համալսարաններ, ճեմարաններ, հիւանդանոցներ, զեղարաններ է շինում, հասարակութեան առողջութեան վերայ հոգալու մասնաժողովներ են կազմվում և մեկը դարձեալ տեսնում ենք, որ լինում են այնպիսի քաղաքներ:

ուր բազմաթիւ բժշկական հաստատութիւններ և երևելի բժիշկներ կամ լինում են այնպիսիները ուր սորանցից շատ քիչ կան բայց մենք միևնոյն ժամանակ տեսնում ենք, որ առաջին քաղաքի մէջ հիւանդութիւնը և մահը աւելի սաստիկ է քան թէ երկրորդում, տեսնում ենք որ շնայելով երկու երկիր կամ քաղաք մի և նոյն բարեխառնութեան կլիման ունին, բայց մինի մէջ շատ հիւանդութիւն և մահ է պատահում քան միսում:

Այս փաստերը աչքի առաջ ունենալով, մենք հետևեցնում ենք, որին և համոզուած ենք, թէ մարդկութեան հիւանդութեան և մահուան աստիճանը կախումն ունի հասարակական կենցաղավարութեան պայմաններից, թէ այս պայմանները կարող են տեսակափոխուել անվերջ և անասման, և թէ այս պայմանների փոփոխուելովը, անպատճառ փոփոխում են և այն երևոյթները, որոնք նորանցից կախումն ունին, այսինքն, հիւանդութիւնը և մահը: Մենք սորանով կամենում ենք ասել, և ասել խորին համոզմունքով, թէ մարդկանցի առողջութիւնը և մահը մինչև մի որոշեալ աստիճան նոցա ձեռքն է, նոցա անմիջական իշխանութեան է ենթարկուած և կատարելապէս և անկասկածելի կերպով կախումն ունի նորանցից: Մենք կամենում ենք համոզել, և համոզվել կատարեալ հաստատով, թէ միայն բժշկականութիւնը, ինչպիսի կատարելութեան և հասունէր, չի փրկում մարդկութիւնը նորան լափող շարիքից, այլ միայն նախապաշտպանողական բժշկականութեամբ, որ նոյն է կենցաղավարութեան բարեդրմամբ կարելի է հասնել այդ նպատակին:

Նախապաշտպանողական բժշկականութիւնը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ կուլտուրան: Այս բառը մի քիչ պարզենք:

Մարդի և ընդհանրապէս ամեն կենդանու կեանքը երկու սկզբունքների փոխադարձ ներգործութեան արդիւնքն է, այսինքն, կենդանի կազմուածքին (организмъ) ամենափոքր խոտից սկսած մինչև արարածների թագաւոր — մարդը և շրջապատող միջոցի (среда): Այս երկու սկզբունքները շատ սերտ կապ ունեն միմեանց մէջ — որչափ լաւ պայմանների մէջ է գտնվում արտաքին միջոցը, այնչափ և ս երկարատև և լաւ է անցնում կազմուածք կեանքը, որչափ վատ են գոյութեան արտաքին պայմանները, այնչափ կարճատև դառն և ցաւալի է կազմուածք աճումը: Սորանից երկու բան են առաջ գալիս, այն է, որ բարեւորուած կազմուածք կատարելութեան է տանում, իսկ նորա պակասութիւնները յառաջացնում են խանգարմունքներ: Այս հզօր և անփոփոխ կանոնը ամենալաւ կերպով բացատրումէ Գարվին, Արեմմ գիմենը նորան, տեսնենք նա ինչ կասէ: Նա ասումէ որ ձին կարող է զարգանալ և վերին աստիճանի կատարելութեան հասնել թէ Ամերիկայում, թէ Անգլիայում, թէ Արաբիայում, և թէ ամեն տեղ, թէ ցուրտ թէ բարեխառն և թէ տաք կլիմայի տակ, միայն թէ հարկաւոր է այս բանի համար նորա վերայ լաւ հոգ տանել, նա հաստատում է որ էշին իւր հասակի և ուժի նկատմամբ կարելի է աւելի կատարելագործել, այս բաների վերայ հիմնուած նա իրաւունք է ստանում ասել, թէ էշի միւս յատ-

կուժիւններն ևս կարող են բարւոքուել ընտրութեամբ արտիւ «Անգլիայի և Հիւսիսային Ամերիկայի էշերի կարճահասակութիւնը աւելի վաս Տագացողութենից էր քան թէ ցրտից»։ Պարզինը՝ բնական գիտութիւնների ուսումնասիրութեանը նոր ուղղութիւն տուաւ։ Նոցա հեռաքրքրելի արու և կալուստայի նշանակութիւնը բարձրացրեց։ Նա հակառակ մինչև իր ժամանակ տարածուած կարծիքին հաստատեց, որ մարդը իւր ցանկութեան մինչև իսկ քմահաճութեան համաձայն կարող է կենդանիների կազմածի զանազան մասերը փոփոխել, և նոցա յարմարացնել յօգուտ իւր։ Նա հաստատեց, որ կենդանու կազմածը իւր մէջ ոչինչ մշտական և անփոփոխելի չունի։ Նա հաստատեց, որ կուլտուրան այնպիսի մի հրկսայրի գործիք է, որով միայն կարելի է բարիք վայելիլ, որ կանոնաւոր ընտրութեամբ կարելի է հրաշքեր գործել, որ առատ կերակուրը՝ շատ ցեղերից յետոյ ազդեցութիւն է անուժ սերունդի բազմամալուն և այլ բաների վերայ։ Նաստուժ է, որ ընտանեցած ծագումն գերութեան մէջ ազդեցով, զանազան վտանգներից խուսափելու և կերակուր պտուխու համար, չէր կարողանում իւր միաքրքրեանազգայնութիւնը զգացումները գործածել և կամուօր շարժումներ անել։ մեկը կատարեալ իրաւունք ունինք ասելու թէ նորա ուղեղը շտիպազանց քիչ էր պարսպում, ուստի և նա միասունց։ Մենք՝ այսպիսով տեսնում ենք, որ կազմածի ամենակարեւոր գործարանն ևս՝ անդործադրութեան շնորհով, ընդհանուր կանոնին ընթարկուելով, փոքրանում է։ Արիչ խօսքերով, սորանից հետեւում է թէ ստրկութեան մէջ ազդող ազգերը չեն կարող մտաւարպէս զարգանալ և քաղաքակրթութեան այն աստիճանին հասնել, որին հասնում է ազատ ազգը, և մարդ իւր ուղեղին համարաատասեան կերակուր շտալով, բթանում է և յիմարանում։

Գեո սա քիչ էր բաւական չէր որ նա ցոյց տուաւ կուլտուրայի՝ իբրև ցեղի բարւոքման և կատարելութեան ամենալաւ միջոցի ուժը և նշանակութիւնը, որ կուլտուրան միջոց է տալիս հակառակել արտաքին անյաջողութիւններին։ այլև նա ցոյց տուաւ որ միայն լաւ կուլտուրայի հետեւանքն է կենսի զանազանատեսակ արտաքին պայմաններին յարմարացումը։ Սորա փոխանակ եթէ որ կուլտուրան արհամարհանքի մէջ է, եթէ որ յարմարցումը անմտութեամբ է լինում, կենդանական և բուսական անտեսաւարութեան մէջ յառաջանումը բոլորովին հակառակ երևոյթ։ Այն ամենը ինչ որ կուլտուրայով չի առաջնորդում, ինչ որ դէպքերի բնական ընթացքով չի կատարվում, դառնում է նախնական վայրենի կոպիտ ակար գրութեան։ Պարզինը այս երևոյթը բեկերէ՝ օրէնք է անուանում։

Մարդն ևս հպատակում է մի և նոյն օրէնքներին, լաւ կուլտուրիայի միջոցով մարդի ֆիզիքական և բարոյական վիճակը բարւոքվում է և կատարելագործվում, իսկ հակառակ դէպքում՝ ենթարկվում է բեկերսի օրէնքին, այսինքն դառնում է դէպի իւր նախնական գրութիւնը։ Այսոցը ևս ապացուցանում է մի և նոյն բանը, նա ասում է, «եթէ որ և իցէ ազգի նորա կենսի զանազան շրջաններում իւրաքանչիւր անհատի մարմնակալ»

մութեան ճշմարտ պատկերը և ճիշտ կենդանագիրը միմեանց հետ համեմատելք, մենք կաեանենք որ ազգի արտաքին նշանները բարբառովին համապատասխան են նորա կուրտուրայի զարգացման յառաջադիմութեան, անշարժութեան և յետադիմութեան հետ: Աւելի պարզ դեպքերից մի քանի օրինակ բերենք: Լատամ մի աղիւսակ ունի, որի մէջ ցոյց է տրուում թէ հին Շառլանտացիների ջանքի բովանդակութիւնը աւելի փոքր էր, քան թէ նորերինը, որը քաղաքակրթութեան ուղղակի և անընդմիջական հետեւանքն է: Երբա Պրէքի փորձերով գտած է, որ մարդկային նախնական ցեղի ծոծրակը աւելի է զարգացած և ճակատը աւելի հարթ է, և որ քաղաքակրթութեան յառաջադիմութեամբ ճակատը աւելի դուրս է բնկնում, իսկ ծոծրակը՝ բնդհակառակը, աւելի հարթանում: Այսպիսի փոփոխութիւնը շատ դանդաղ է կատարվում: Տը Սալլը հաստատում է, թէ վայրենի ազգերը համեմատաբար աւելի մեծ բերան և հաստ պոօշներ ունին, քան թէ քաղաքակրթեալ ազգերը: Նրբացած բարբր, բազմակողմանի գործունէութիւնը փափկացնում են կողտութիւնը, մեղմացնում խստութիւնը և քնրչացնում կողիտ ձևերը, որչափ որ և իցէ ազգի մտաւորական զարգացումը սովորէ, այնչափ ևս նա գանձում է նախնական գրութեան մէջ, այնչափ ևս նա երթարկվում արտաքին բնութեան ազդեցութեանը և գոյութեան արտաքին պայմաններին:

Սորա ճշմարտութիւնը կարելի է ապացուցանել շատ փաստերով: Այսպէս, եթէ մի ամբողջ ազգի գոյութեան պայմանները շատ պարզ են և նորա գործունէութիւնը նորա մէջ է կայանում, որ իւր կողիտ ֆիզիքական պահանջներին բաւականութիւն տայ, այն ժամանակ, այդ ազգի իւրաքանչիւր անհատը ներկայացնում է չափազանց հետաքրքիր արտաքին նմանութիւն, և սա առաջ է գալիս նորանից որ ուղեղի ընթացքը առաջադիմութիւն չանելով դեմքին միատեսակութիւն է տալիս: միայն կրթութիւն կազմածի զարգացմամբ և կրթութեան տարածմամբ առաջ է գալիս տարբերութիւն ու բազմատեսակութիւն: Այս երևոյթը պատահում է ընտանի կենդանիների մէջ ևս, որոնց արտաքին տեղերը աւելի վայելուչ է և հաճելի քան թէ նոյնացեղ վայրենի կենդանիներինը, և սա առաջանում է այդ կենդանիների մարդկան աւելի մերձա որ լինելուցը: Եւրոպայի ներքէ Եւրոպացիներէ որև իցէ կերպով ընկնում են վայրենիների ձեռքը, նորա բնգունելով նոցա բարբր, կողիտ ձևերը և նոցա կեանքի եղանակը կորցնում են իւրեանց առաջայ դեմքի գծագրութիւնը, այնպէս որ դժուար է լինում որոշել նորան վայրենիներից: Ընդհակառակը, եթէ որ և իցէ վայրենու որդին ծնուում ազատութեան մէջ նորա դեմքի գծագրութիւնը գեղեցկանում է, նորա աչքերը աւելի ազդու են լինում, նա ունենում է աւելի ազատ վարմունք և քնքոյշ կազմութիւն, քան թէ նորա սարկութիւնից դարձած ծնօղներից: Նկարված է, որ որչափ աւելի անկախութիւն է տրուում Բամայ քոյի բնակիչներին, այնչափ աւելի են աճում նոցա անձնական արժանաւ որութիւնը ճանաչելու զրացմունքը: Աինէկը

Լիւեւին ասաց. « Այժմ՝ ինչպէս որ ասաց էր սեւերին շոյեաքէ վշտացընել. նորա այժմ՝ կարող են մտածել, լռել և տեսնել Սրպետկեանից սչ վատ, նորա աստճուանից աւելի և աւելի խելաւի են այժմ՝ և կլինեն տեւի » :

Ահա այսպիսին է կուլտուրայի ազդեցութիւնը մարդի վերայ: Մենք ասացինք, թէ մարդը ենթարկուած է ինչպէս կատարելագործութեան, նոյնպէս և Քէլէրսի ազդեցութեան: Արարչու Ֆուխը նիւթեր հաւաքեց մեկրոցէ-Փալների այսինքն այնպիսի մարդիկներին մասին, որոնք իրեանց փոքրիկ սակաւ զարգացած գլխովը, ուղղի քանակութեամբ և յատկութեամբ աւելի նմանում են կենդանիներին: Նա նոցա մը տեսնում է մարդկային բնութեան յետադիմութեան ձգտումն, այս երեւոյթը նա համարում է կուլտուրայի պակասութեանց հետեանք, սա սմնազգիքն ակունէ որին հասնում է մարդս ամբողջ սերունդների վատ վիճակի պատճառով: Սա շատ տխուր և խրատակամ է: Նա ցոյց է տալիս թէ մարդկային բնութիւնը մինչև ինչ աստիճանին կարող է ապակամուել: Եթէ որ մարդկութիւնը կարող է համակրութիւն և յարգանք վայելել նորա համար, որ նա իր երկար գոյութեան ժամանակ ստեղծեց այնպիսի շափազանց զարմանալի և մեծ խելք, ինչպիսի էր Պարվին, և այնպիսի բարոյականութեան կատարելութիւն, ինչպիսի էր Պարիբալդի, միւս կողմից նա գրգռում է սարսափ և զգուանք իտիօսների սպուշների (cretin), մեկրոցէՓալների աստուութեամբ, որոնցով լի է բոլոր քաղաքակրթիւն աշխարհը: Ահա ասիկ երկու ճանապարհ, որոնցով գնալը բոլորովին կախում ունի մարդից — կատարելութեան, կուլտուրայի ճանապարհ և անարոշ բեկբերսի. . . ճանապարհ:

Այսպիսով ուրեմն կուլտուրան*), բոսի բնգարձակ նշանակութեամբ, մարդին միջոց է տալիս ամեն տեղ ամեն կլիմայի տակ ապրիլ, միմիայն կուլտուրայով է, որ մարդս թէ գետի, թէ լճի, թէ ձովի և թէ Ավկիանոսի վերայ կարող է իւր բնականութիւնը հաստատել: Աուլտուրան սովորեցրեց բնութեան ամեն թագաւորութեանց, մանաւանդ բուսական և կենդանական թագաւորութեան նիւթերը մշակել, զանազան գործուածքներ գործել և նորանցից զանազանատեսակ հագուստ պատրաստել, և նայելով եղանակին հասնել կամ մինը կամ միւսը և այդպիսով պահպանել իւր մարմնի առողջութիւնը, իւր կազմածի բնական ընթացքը և տարութիւնը: միմիայն կուլտուրայով է որ մարդս հասնում է բնական հասակին և ամենտեսակ կլիմաների տակ հաւասարաշափ լու է զարգանում մտաւորապէս և ֆիզիքապէս և համարեա թէ մի և նոյն ժամանակ է հասնում սեռական զարգացման: Աւերջապէս մարդի համար ամեն օգտակար բան կատարուում է կուլտուրայի օգնութեամբ: Եւ թէ մարդիկ ինչով են զանազան-

(*) Մենք կուլտուրայ տեսլով հասկանում ենք մարդի գոյութեան արտաքին սրայմանների ուսումնասիրութիւնը եւ նոցա յօդուտ իւր գործածութիւնը:

ում կենդանիներից՝ հարցում են մենք առանց դժուարանալու կարատախաններ — կուլտուրայով: Մարդին բնութեան տեր է անում կուլտուրան: Նա իշխում է բնութեան վերայ: Հայտնակեցնում նորան իր բանը: Ճշտում է, ձևափոխում է նորան գործածում է նորան իր պահանջներին միմեայն կուլտուրայի օգնութեամբ: Ահա այսպիսի է կուլտուրայի բարիքը: Բայց զև՛ նորան ով պահասութիւն ունի կուլտուրայի մէջ, ով նորա կարող միջոցներից սգոտ չի քաղում, որովհետեւ նա իր բնութեան հետ ունեցած պատերազմը երկար չի կարող շարունակել, կյանքի թափումը ջրայէս նորան դո՛հ կերթայ, և այս բանը լինում է կուլտուրայի պահասութիւնից: Երբ տանք թէ կուլտուրայի երկու պահասութեան կորստական հետեանքները սովի (քաղցածութիւնը) և աղքատութեանը, այս երկու տարիքը ինչ սարսափելի չարիք են պատճառում:

Վերջին ժամանակներս բժշկները շատ մեծ ուշադրութիւն դարձրին հիւանդութիւնների աղբիւրների վերայ: Շատ ժամանակ չէ որ այդ բոլոր հիւանդութիւնների աղբիւր էին համարում կլիման, բայց շատ փորձերը ցոյց տուին, որ լաւ նիւթական պայմանների մէջ կտրելի է ապրել ամենատեսակ կլիմայի տակ, գտան որ բոլոր թշուառութիւնների պատճառը ընկերական (социальный) կեցութիւն է:

Մարդի կանոնաւոր և բնական գոյութեան նորա ֆիզիքական և մտաւորական լաւ զարգացման համար, անպատճառ հարկաւոր է արտաքին շրջապատող միջոցի (среда) որոշեալ պայմաններ: Մարդի նորա ծնուելու օրից սկսած մինչև նորա գոյութեան վախճանը, հարկաւոր է որոշեալ քանակութեամբ և յատկութեամբ կերակուր, Բացի այս կերակուրը՝ իւր քանակութեամբ և յատկութեամբ, համապատասխան պէտք է լինի նորա հասակին, տարուայ եղանակին, բայց ոչ երբէք նորա բարեբախտութեանը, բնախօսական պահանջները հարստութիւն կամ աղքատութիւն ամենևին չեն ստուգուի, և նոցանով առաջնորդուել չեն կարող: Առաջինը պահանջներին բուսականութիւն է տալիս, իսկ երկրորդը նոցա ճնշում է: Աստի եթէ ամառիկինը լաւ կերակուրը և ուլիւրը իւր համար է պահում, իսկ վտակը և անպէտքերը միւսներին է կերցնում, սորա պատճառը բնախօսական (физиологический) պահանջների տարբերութիւնը չէ, այլ ընկերական գրութեան տարբերութիւնն է: Մարդի ծնած օրից մինչև իւր կեանքի վերջը, նորան հարկաւոր է որոշեալ քանակութեամբ մարդու օգուտ որոշեալ յատկութեամբ յարկ բնակարան:

Նորան նոյնպէս հարկաւոր են հանգերձ և կօշիկ Եւ յո՛ր բոլորը համապատասխան պիտի լինին, ինչպէս հասակին և սեռին, նոյնպէս և մանաւանդ տարուայ եղանակին: Մարդին նոյնպէս հարկաւոր է աշխատութեան և հանգիստի ժամանակի որոշումն: ինչպէս հանգիստը նոյնպէս աշխատութիւնը՝ կազմածի ֆիզիքական և մտաւորական կանոնաւոր ընթացքին՝ անհրաժեշտ պահանջներ են: Ով կամենում է աշխարհի մէջ լաւ և երկար ապրել, պէտք է որ իւր աշխատութեան իւր կազմածի կորստա-

ախ չափով կերակուր զորձածէ՛ր բաւականաչափ Տանգիստս՝ անդորրութիւն և բուն ունենայ՝ քաղցը կամ կերակուրի պակասութիւնը կամ աղքատիկ սնունդը կամ վատ կերակուրը կամ անհամապատասխան կերակուրը չեն լծողնում՝ մարդին մարդ բառի բուն մարդով մարդ լինել։ Նորա արիւնը պահանջուած ասորբերը չէ ստանում։ Նորա սնունդը պակաս է լինում։ արեւնադարձութիւնը և շնչառութիւնը անբաւական։ ուղեղները և պահանջուած սնունդը չորանալով իւրեանց պաշտօնը կանոնաւորապէս չեն կատարում։ մարդը թէ մտաւորապէս և թէ բարոյապէս լծուլանումէ։ Նորա ոյժերը պակասում են։ ինքն բթմանումէ։ Տիւժումէ։ սակաւարիւն է լինում։ Նորա ջղերը գրգռուում են։ նա դառնումէ դիւրազգիս։ նախանձնա և անբաւական։ Ասում են որ Ֆրանսական մեծ յեղափոխութիւնը ժողովրդի քաղցածութեան և աղքատութեան հետեանքն էր։ . . . նիհարէ քաղցած մաղը բիշ է զարգանում՝ ֆիզիքապէս և մտաւորապէս։ նա կամ բողբոջին սերունդ չի յատաջացնում։ կամ թէ յատաջացնումէ։ լինումէ լծող և նուազ։ վաղամեռ։ Կարողութիւն ունեցող մարդիկն և ս. եթէ վիշ ժամանակ քաղցած են մեռւմ։ նորա գրգռուած գրութեան մէջ են գտնուում։ Այս բանը հասկանալով կանայք նախ քան իւրեանց ամուսնու տուն գալը՝ առաջուց կերակուրի պատրաստութիւն են անում և իւրեանց ամուսնաց միջև ճաշը ոչինչ չեն խնդրում։ Երբ որ մարդը մի քանի բաժին լաւ կերակուրներով իւր փորը այնչափ լցնում է։ որ ստիպուած է լինում իւր գօտին արձակել։ այն ժամանակ նա լինումէ բարբով հեղ և մեղմ։ Նորա բնաւորութիւնը զիջող է։ թեթեւ ժպիտը նորա կազմածի անհրաժեշտ պահանջների բաւականութեանն են վկայում և ահա այդ ժամանակ խորամանկ կիներ առաջարկումէ իւր ամուսնուն իւր խնդիրը։ բողբոջին համազուած լինելով իւր խնդիրքի յաջողութեանը։

Եթէ որ մարդս քաղցի զգացմունքին մի քանի ժամ բաւականութիւն չտալով։ գտնվումէ գրգռուած և բարկացած գրութեան մէջ։ եթէ որ այս անողորմ աններող զգացմունքը շատ կարճ ժամանակում բաւականութիւն չտանալով ստիպումէ մարդին առ վայր մի ամենայն թշնամութեամբ և կատաղութեամբ վարուել իւր մերձաւորների իւր լծակաղին։ սրտի սիրած արեւնակից եակների կտոջ։ որդիների և ուրիշների հետ։ եթէ որ բաւականութեան ժպիտը և բարբի մեղմութիւնը միայն այս անսանական զգացմունքին բաւականութիւն տալուց յետոյ այնչափ շուտ է երևում և նորա ամբողջ բնութեան մէջ տարածվումէ մեղմութիւն և զիջողութիւն։ ասոյն ներկայացրէք ձեզ։ թէ ինչ գրութեան մէջ պիտի լինի այն մարդը որ անդադար կամ յաճախ ենթարկվումէ այս անսիրտ զգացմունքին այս աննող անբաւականութեան։

Միւս գործիչը « աղքատութիւնը » մարդին զրկումէ լաւ հանդերձներ և կօշիկներ հաղնելուց։ իջումէ նորանից իւր մարմինը տաք։ պատշաճաւոր։ մաքուր և անարատ պահիւս միջոցներից։ ստիպումէ նորան կանայք վարել

ցատիս աղքատս նեղ, խոնաւ և ցուրտ խրճիթի մէջ, Հանդերձի և կոչկի պահասութիւնը ենթարկումէ նորան վատ եղանակի ամեն պատահարներն և նորան ծանրաջափի և ջերմաջափի ամեն փոփոխութեանը զգայուն է դարձնում: Աշխատութեան պատճառաւ զողորմէ մտրդի Ֆիզիքական և մտաւորական զարգացումը և մտրդս դիմումէ զանազան ծայրայեղութիւններն սկսումէ գործածել թունաւոր բնականներ, որից առաջ են գալիս շատ շարքներ և փորձանքներ: Նա մտրդին տանումէ դինեատն և յետոյ այսպիսի պատուար, սեղեր, ինչպիսի են, սասիկանութիւնը, պատաստաները, բանտերը, արտոնները, թիարանները, Քողցը և աղքատութիւնը՝ մի կողմից երկիրը նախապատրաստում և պարարտացնումն զանազան վերին և ցածր, իսկ միւս կողմից՝ մտրդի մտրմիւր այս թղիները դիրաւ ընդունելու ընդունական են անում: Այսպիսով ուրեմն սոսքը և աղքատութիւնը ծնեցնում են բազմաթիւ հիւանդութիւններ և բազմաթիւ տանջանքներ: Մի քանի օրինակ բերենք:

Քողցած ախի (ГОЛОДНЫЙ ТИФЪ) կոչուած հիւանդութիւնը հետեւաբ և աղքատութեան և սովի (բացի) ախիքը սլոմեան քաղաքակրթեալ (բարի ընդարձակ և բուն մտրով) երկիրներում չի պատահում: Նա յայտնի էր նախնի ժամանակներում: Աստուգապէս Աւրիսովը ասումէ. «Բրլանտեան՝ համարեա թէ երկու զար շարունակ քողցած ախիի ապաստանարան դարձաւ: Աշխարհի մէջ ոչ մի երկիր ախիի կողմից չի կարող դերազանցել Բրլանտային: 1817—1819 վերջը տարածուած էր սաստիկ վարակիչ հիւանդութիւնը, որի ժամանակ մեռան 4,400 հոգի և ժողովրդի մեծ մասը հիւանդացաւ: Նա այս սեղից տարածուեցաւ Եզիմբուրգի և Լօնտօնի մէջ ևս: 1646 ին և 1848 ին հիւանդութիւնն սաստիկացաւ կանաչ կզզու վերայ (այսպէս էր կոչուում մի ժամանակ Բրիտանիան կզզին): այնպէս որ միայն Գուրլինում հիւանդացան 40,000 մտրդ: Պէտք է նկատել որ այս հիւանդութեան կարապետեց գեանախնձորի վատ հունձքը (Բրլանտայում հացը պատրաստում են գեանախնձորից), որի հարուածին ենթարկուեցան միլիոնաւոր մտրդիկ: Անդրիացիները կարծիքով, Բրլանտացիները ուր որ գնում են, իւրեանց հետ տանելով աղքատութիւնը, յառաջացնում են վարակիչ հիւանդութիւններ:

Բրլանտայի մէջ պատահած հիւանդութիւնների ժամանակ, քողցած ախիքը տարածուեցաւ Ֆրանսիայում և վերին Սիլիզիայում: 1835-ից սկսած Բրլանտայի մէջ զիզացիները բայեկկցութիւնը հետզհետէ իտանգարուեցաւ 1846 թ. գեանախնձորի հունձք բոլորովին չեղաւ, իսկ ցորենները շատ քիչ եղաւ: Շատ տեղերում ժողովուրդը սկսեց կերակրուել չորգամով, զազարով, կաղամբի տերեւերով, փառ գեանախնձորով և շատ սակաւ և սակ հացի փոքր կտորով: Սկսուեցաւ վարակիչ հիւանդութիւնը, այնպէս որ արեւմտեան Բրլանտայի 1857 թ. բնակիչների թիւը 1641 թ. ուն հաւասարեցաւ, իսկ արեւելեանում 60,077 հիւանդներից մեռան 11,900 մտրդ: ուրեմն համարեա 20/

Աւերման սխիզիսայում 1645 թ. գեանախնձորի հունձը լաւ շեղաւ, կարօտութիւնը հետզհետէ սաստկանումէր, ժողովրդի սիրելի կերակուր կազամը պարպեցաւ. 1847 հեղեղների պատճառաւ գեանախնձորը բոլորովին փակեցաւ, ժողովուրդը կերակրվումէր խոտով, սկսուեցան վարակիչ հիւանդութիւններ և սարսափելի սով և նոցա անբաժանելի ընկեր մահը մեռան փոփոյ 20,000 հոգի:

Գօկտօր Բէյլըր, որ յաճախ դիտումէր օտար, սասց. « այս հիւանդութեան ամենագլխաւ որ աղբիւրը ընկերական աղքատութիւնը և կենցաղափարութեան խղճալի պայմաններն են »:

Մարդկութեան միւս կորուստերը և ջնջող պատիժն է մաղձացաւ (cholera) որի պիտաւոր արմատը դանձումէ հասարակական աղքատութեան մէջ. ուսուցչապետ Գիւլը ասումէ « աղքատութիւնը, իւր անբաժան ընկերների — օտարութեան, մի կտոր հաց դանկու, հոգսի մաշողական աշխատութեան, վառ կերակուրի շատակերութեան և արեցութեան, անմարբութեան, ագիտութեան, վառ և անբաւականացուցիչ հազուստի խոնաւ և մարդիկներով լեցուած բնակարանի վառ և անբարոյական կեանքի հետ միասին ծնեցնում են մաղձացաւ (cholera):

« Աւր որ հասարակական և մասնաւոր առողջապահութեան կանոնները սակաւ են պահում, ուր որ օտարակառն ֆիզիքական և բարոյական աղականութիւնը, այնտեղի հողը մաղձացաւի ամենագաղտերը հողն է:

Քաղցը (սովը) և աղքատութիւնը զանազան սարսափելի հիւանդութիւնների առիթ են դառնում, որտեղ ջարդում են անմեղ մանուկներին, Աւարդախոր, ծաղիկը, կարմրակը ևս հասարակ առաջ են գալիս այնտեղ, ուր որ աղքատութիւնը միացած է անմարբութեան, ապականութեան, ցոփութեան, զարշահոտութեան հետ: Բէյլըր ասումէ. « եթէ որ կազմածը երկար ժամանակ կերակուրի կարօտութիւն է քաշում, համարեա թէ նորա ամեն գործարանը իւր դերը անկանոն է կատարում, սկսում են հիւանդութիւններ, անսիրելիութիւն և մահ. քաղցածութիւնը անասնական անսանձ կիրքն է, որ մարդին զրգումէ ինքնասպանութեան, զանազան ոճիրների, յանցանքների, իշխանութիւնների դէմ ապստամբութիւն գործել, դէպի խելագարութիւն և ըն. և ըն. »: Քաղցածութիւնը պակասեցնումէ արիւնը, որից առաջանում են սակաւարիւն լինելը, ընդհատութիւն թորախա և զանազան ջղային հիւանդութիւններ, « Պուշտ փորով կերակուր չուտողը ենթարկուած է զանանցանքներին, ցնորքներին, երեւակայութեան, տանջվումէ անսիրելիով և զլխաւ որտեղ զոհ է դնում վարակիչ հիւանդութիւններին »:

Փորձերը ցոյց են տուել, որ ձնշուած, ստրուկ, աղքատ, երկրագործութեամբ և ձեռնարուեստութեամբ (промышленность) պարապելու անկարող աղքերը հետզհետէ սակաւութիւն են դառնում, թշուառանում, բարոյապէս և ֆիզիքապէս անգործունեայ են լինում և յաճախ անբարոյական:

Աւարակիչ Տիւանդու թիւնների պատճառների վերայ եղած փորձերը ցոյց տուին որ այդ ժամանակ մի օտարափախ անհասկանալի անասունների վտա թոյն մեր կազմածի մէջ մտնելով՝ առաջացնում է մեծ վնաս Այս վնասակար թոյնը հերբը միազմայ (MORCINA) էին անուանում: Թոյն մեք անուանում ենք ոչ միայն մկնդեղը, սնդիկը, այլ ալոհոլը ձխախտար և վերջապէս այն ամենը՝ ինչ որ մեր կազմածի վերայ կորստարել է ներգործում: Մենք այս թոյններին ենք վերաբերում միազմաները հացկատակները (բոյս կամ միջատ որ մարդի արեւնով են կերակրում): սնկիկները որոնք մեր արեան հետ խառնուելով, ներգործում են ինչպէս կատարեալ թոյն: Ընդհատ սնկիկ, ծագիկ, մազձացաւի, զանազան փփերի և Տիւանդու թիւնների զխտ որ պատճառ կազմում են բուսական հացկատակները և սնկիկները: Գործը են պատահած որ զինուորները փտած յարդի վերայ քնելով ստացել են ծագիկ, Երկու ասկանգործներ, որ մարբում էին բարբոսած տակառը, զըխները ցաւեցան և զըխները պատեցան սկսեցին փսխել: այս բանը անցաւ արիւն թողնելուց և լիմանագ խմելուց յետոյ: Արուեստական կերպով սնուցուած մանուկների ասկիկների ցաւը առաջանում է կաթի, կաթնամանի, եղջիւրի և պատկի մէջ զարգացած սոնկիկներից:

Եթէ այժմ ընթերցողը հարցնէ, թէ լաւ կերակրուող և հարուստ մարդիկը ինչու են տիֆով վարակւում, ինչո՞ւ համար զօրքերի բանտերի, արքայազանների նաւերի վերայ տիֆեր են առաջանում, մեք սորան կը պատասխանեք: Եթէ քաղցը (սովը) մարդին յարմարեցնում է թոյնը դիւրաւ ընդունելու, խի աղքատութիւնը, նեղ բնակարանը փակուած օդը այնպիսի պայմաններ են որոնք ապականութիւն են առաջացնում, և այս ապականութեան մէջ ծնւում են զանազան սնկիկներ, հացկատակներ, որոնք ոչնչացնում են ամենքին առանց զանազանութեան սննի և աստիճանի: Երբ որ զօրքը մի տեղ սաստիկ խիտ կերպով բանակում է հարկաւոր շարժումները շքանում, սնունդը մաքրութիւնը և գոյութեան ամեն հարկաւոր բաները չի ունենում, սկսում է տիֆ, այլ զարգում է զինուորներին, աստիճանաւորին, գնդապետին, զօրապետին և ամենքին: Եթէ մարբութիւնը յրշափ սնհրած լից է զօրքի համար՝ ցոյց է տալիս հետեւեալ գործանալի օրինակը: Աւրիսով ուսուցչապետը ուսում է վերջին Երիկ պատերազմի ժամանակ աւելի շատ մարդ մտնաւ քան թէ մեծ հիւսիս — ամերիկական պատերազմի ժամանակ: Այն ժամանակ երբ Երիկի զօրքերը ջարդվում էին տիֆից, քաղցից և այլ հիւանդութիւններից, ամերիկական զօրքերին այդ բաները ամենուրեք շոյատաւ հեցան: սորա զիտար պատճառը այն է, որ ոչ մի աղքատ ամերիկացիներից աւելի հօգս չի տանում իւր զօրքի բարեկեցութեան, նորա բարոյական և ֆիզիքական պահանջների վերայ: Մէ և նոյնը կարելի է տեսլ բանտերի, արքայազանների, զիտա և աղքատ խրճիթների համար: Եւս ուր ետում են ժողովրդեան բազմութեանը, որ տիրում է կեղտոտութիւն, անմաքուր

բայ հիմնուած համազմունքին թէ քաղցը (սովը) և աղքատութիւնը ընկերական կեանքի երկու կարող տարրերը առաջացնում են սաստիկ տանջանքներ և անսիրելութիւն և մարդկային ազգի ջարդ: Մենք մի և նոյն ժամանակ ցոյց տուինք որ միայն իւր բարիքի վերայ խեղական մտածողութիւնը նոյաատակին չի հասցնէր որ անհրաժեշտ է ընդհանուր պարտականութիւնն է, ամեն դասակարգի բարեկեցութեան նոյն մեծ մասի պիտոյքներին բաւականութիւն տալուն վերայ հոգալ: Մենք դարձեալ կամեցանք ցոյց տալ որ կուլտուրան այս խօսքի ամենաունդարձակ նշանակութեամբ ինչպէս մարդիս նոյնպէս և կենդանիների սերունդը լուացնումէ որ կուլտուրայի պակասութիւնը առաջացնումէ ամբողջ ցեղերի անսիրելութիւնն որ միայն կուլտուրայի ուժով կարելի է հեռացնել մարդկային պատիժները — վարակիչ հիւանդութիւնները, ժանտախտները, հացկասակները, Յիշեցէք ընթերցողներ, որ քաղաքակրթութիւնը և կուլտուրան ժանտախտին ձեռնարկին իւր սեփական հոյրենիքում — Եզրիգասում: Ե. յսպիտով ուրեմն մենք տեսնում ենք, ներքերտ Ալէնսէրի շատ նշանաւոր սկզբունքի ճշմարտութիւնը որ իւրաքանչիւր փոփոխութեան հետևումէ մի՛ից աւելի փոփոխութիւնն:

Ուրիշ բաներով արտայայտելով այս սկզբունքը, մենք կվերջացնենք մեր յօդուածը որ կուլտուրայի իւրաքանչիւր բարերար փոփոխութիւն յաջորդումէ մարդի ընկերական կեանքի կամ վիճակի մի՛ից աւելի բարձրումն (կատարելութիւն):

ԳԷՆՐԳ. ՃԷՏ Ա. ԼԱՔԱՆԻ ՈՒՍԱՆՈՂ
Թ. ՊԱԼԵԱՆ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

Բնական և աւետարանական ճշմարտ և անսխալ վճիռ է չպարփակել զլուցեալ ճրագն ընդ գրուանաւ որք յանդգնին ներհակաբար վարիլ զլոյսն ի խաւարի թաքուցանել զուն գործելով՝ մեղանշին նոքա ընդ դէմ բնութեան և աւետարանական ճշմարտութեան:

ՎԵՀԱՓԱՌ. ՀԱՅՐԱՊԵՏՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ ԳԷՆՐԳ Գ. յօրէ անտի ամբառնալոյ յԱթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց, ոչ միայն յեկեղեցւոջ մերում, այլ և յողջոյն ազգի մերում լուցեալ զլուսապայծառ ճրագունս բարեկարգութեան, սւսման և յառաջադիմութեան, հանապազօրեայ տրնութեամբ իւրով զորդիս եկեղեցւոյ լուսաւորէ ի միտս և ի հոգիս զոր մոռանալ կամ ուրանալ երբէք չկարէ անաշառ պատմութիւն ազգիս այսօր և յայայն, զի նշանաւոր բարեկարգութիւնք և ազգաշէն գործք նորին Օծութեան հոշակեալ քարոզին ի համայն ազ-